

ԱՐՄԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ

ՍԵՔԱՍՏԻԱՅԻ ԳԱՎԱՌԻ ՀԱՖԻՔԻ ԳԱՎԱՌԱԿԻ  
ՎԱՐՉԱՍՏՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ  
ՎԵՐՋԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿՋԻՆ

1864թ. վիլայեթների մասին թուրքական օրենքով Արևմտյան Հայաստանը բաժանվեց վեց վիլայեթների՝ Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Դիարբեքիի, Խարբերդի կամ Մամուրեթ-ուլ-Ազիզի և Սեբաստիայի (Սվազի): Այս օրենքով թուրքական վիլայեթը, որի գլուխ կանգնած էր վալին կամ նահանգապետը, բաժանվում էր սանջակների մութեսարիֆների զխավորությամբ, սանջակներն իրենց հերթին բաժանվում էին կազաների, իսկ կազաները՝ նահիենների:

Սեբաստիայի (Սվազի) վիլայեթը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին բաժանված էր 4 սանջակների՝ Սեբաստիայի, Ամասիայի, Թոխատի, Շապին Գարահիսարի:

Իր հերթին Սեբաստիայի սանջակը բաժանված էր 10 կազաների՝ Սեբաստիայի (կենտրոնական կազայի), Հաֆիքի(Հաֆիզ, Գոչ-Հիսար), Գոչկիրի(Ձառա), Եղլտըզ-Էլի(Ենիխան), Տիվրիկի (Դիվրիկի), Գանկալի (Կանգալ), Թոնուսի(Շարգալ), Կյուրինի, Տարենտեի, Ազիզիեի:<sup>1</sup>

Սեբաստիայի բազմաթիվ կազաներից (զավառակներից) ամենահայաշատ, պատմա-ազգագրական հարուստ սովորություններով, սրբավայրերով շրջանը Հաֆիքի(Գոչ-Հիսարի) գավառակն էր:

Հաֆիքի կազան գտնվում է Սեբաստիայի սանջակի արևելքում: Վերջինս սահմանակից էր արևմուտքից Սեբաստիա քաղաքին, հյուսիսից Պոնտական լեռներով բաժանված էր Կյուլիխսար, Անդրեաս կազաներից, իսկ հարավից սահմանակից էր Կանգալ և Տիվրիկ կազաներին:

<sup>1</sup> ՀՀ պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ), ֆ.398, ց.1, գ.14, ք.104, ֆ.439, ց.1, գ.483, ք.1, տե՛ս նաև «Հայկական հայագիտական հանդես», հ.15, Բեյրութ, 1995, էջ.499, տե՛ս նաև «Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի», Կ.Պոլիս, 1903 թ., էջ 187.

Այս կազմայի կենտրոնը հանդիսանում էր Գոչ-Հիսար (Գոչասար) կամ Պետրոսի գյուղը, որը գտնվում է Ալիս գետի աջ ափին: Կազան բաժանված էր 16 գյուղախմբերի (ճահիճների)<sup>2</sup>: Կազայի կայմակամը (կառավարիչը) նշանակվում էր հայերից<sup>3</sup>:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Հաֆիքի կազան ուներ խայտաբղետ ազգային կազմ: Բնակիչները հայեր, թուրքեր, կլբաշներ, հույներ և չերքեզներ էին: Ընդ որում չերքեզները այստեղ էին տեղափոխվել 1878 թ. Ռուսաստանից:<sup>4</sup> Գավառակի հյուսիսային մասերում էին հիմնականում ընկած չերքեզների և կղբաշների գյուղերը: Նշենք նաև, որ կազայի կազմում գտնվող թուրքերը որոշ բացառությամբ այստեղ հաստատվել էին միայն 19-րդ դարի սկզբում:

Այս կազայի բնակչության մեծամասնությունը կազմում էին հայերը, իսկ մնացածը՝ թուրքեր, հույներ, չերքեզներ և այլ ազգությունների ներկայացուցիչներ էին: Դա գալիս էր նրանից, որ հայերի ծնունդը ավելի գերակշիռ էր, քան թե մյուս ազգերի մոտ: Այս կազայի հայությունը մի քանի անգամներ կոտորվել է 1860-ական թթ. և 1895 թ., բայց նորից աճել է և նոր գյուղեր ստեղծել հին գյուղերի կողքին:

Ալիս գետի երկու ափերին, բլրակների և դաշտերի միջև ձգված էր երկարավուն շարքը հայ գյուղերի: Հայկական գյուղերը տեղավորված էին միշտ ցածրադիր դաշտավայրերում և բարեբեր գետերի հովիտներում: Այստեղից կարելի է եզրակացնել, որ հայերը շատ հին բնակիչներ են եղել այստեղ և ավելի վաղ են հաստատվել, քան թե մյուս ազգերը:

Ալիս գետի աջ ափին տեղավորված էին Գոչ-Հիսար, Կավռա, Խոռոխուն, Բրաբերդ, Կովտուն հայաբնակ գյուղերը:

Գոչ-Հիսար (Գոչասար) գյուղի հայեցի անունը Պետրոսի է, որը կենտրոնն էր Ալիսի վերին հովտի ճահիճի: Ըստ որոշ տվյալների 1902թ ուներ 200 տուն բնակիչ, որից 150 տունը հայեր էին:<sup>5</sup> Իսկ մեկ այլ տեղեկության

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 240, տե՛ս նույնը Համբարձումյան Վ. «Գյուղաշխարհ», Փարիզ, 1927, էջ 49, տե՛ս նաև Առաքել Պատրիկ «Պատմագիրքը հուշամատյան Սեբաստիոն և գավառի հայության», Կ. Ա., Բեյրութ, 1974, էջ 307, տե՛ս նույնը ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 940, ք. 11:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>4</sup> ՀՀ ՀԱԽ ԱԲԱ, քթթապանակ 121/1, էջ 34:

<sup>5</sup> Պոտտոլյան Վ.Մկրտիչ Նշվաշխ, գիրք գ., էջ 571:

համաձայն 1900-1915 թթ. միջոցում, ընդհանուր Պետրոսի գյուղում բնակվում էին շուրջ 4000 մարդ, որից 2500 հայ և 1500 թուրք:<sup>6</sup>

Այս տվյալներից, որն էլ որ ընդունելու լինենք իբրև ճշմարիտ, պարզ է դառնում, որ Պետրոսի գյուղում բնակվող հայերը ավելի շատ էին իրենց թվաքանակով, քան թե թուրքերը:

Կավոա<sup>7</sup> գյուղը գտնվում է Սեբաստիա քաղաքից 20 կիլոմետր դեպի արևելք: Ավանդության համաձայն գյուղի բնակչությունը եկել էր Դերջանից և Շապին Գարահիսարի սանջակի Կթանոց գյուղից: Չետագայում ջալալիների, ենիչերների ասպատակությունների և կոտորածների հետևանքով գյուղացիները հաստատվեցին Կամիս, Գոչ-Չիսար գյուղերում, ոմանք էլ՝ Սեբաստիայում:<sup>8</sup>

Այս գյուղում 1875 թ. կար 33 տուն, 432 շունչ հայ բնակչություն:<sup>9</sup> Իսկ 1878 թ-ի տվյալների համաձայն այս թիվը հասնում էր 438 մարդու:<sup>10</sup>

Ինչպես երևում է այս գյուղում հայ բնակչությունը աճման հեռանկար է ունեցել 19-րդ դարի վերջին: Այս փաստերը վկայում են, որ այս գյուղը, իրոք եղել է հայկական:

Խոռոխտն (խոռխոռունիք) գյուղը գտվում է Գոչ-Չիսար գյուղից հյուսիս, Չայ-Քուրդ գյուղից դեպի արևմուտք:

Այս գյուղում հայերը 19-րդ դարի վերջին մեծ թիվ էին կազմում: Դեռ 1870 թ. վիճակով նրանց թիվը հասնում էր 60 տան:<sup>11</sup> 1878 թ. տվյալով նրանց թիվը հասնում էր 378 մարդու, իսկ թուրքերինը՝ 280 մարդու:<sup>12</sup> Իսկ 20-րդ դարի սկզբին, մինչև մեծ եղեռնը հայ բնակչությունը այս գյուղում կազմում էր 1000 հոգի, մինչև դեռ թուրքերը 350 հոգի էին:<sup>13</sup> Այս տվյալները ցույց էին տալիս, որ այս գյուղում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայերը լիովին գերակշռում էին իրենց թվաքանակով և սա իրոք հայկական գյուղ էր:

<sup>6</sup> Առաքել Պատրիկ, Աշխատք, էջ 369:

<sup>7</sup> Կավոա գյուղը, ըստ հույն աշխարհագիր Ստրաբոնի, մ.թ.ա. 150 տարի առաջ Կապադովկիայի Պյուֆատորիս թագուհին է հիմնել և անվանել «Կաբերա»: Կաբերան (Գաբիրան) հետո դարձել է «Կաբրա» և այսպես տարիների ընթացքում հնչյունափոխվելով դարձել է Կավոա, իսկ ավելի ուշ՝ «Կավոա»:

<sup>8</sup> Առաքել Պատրիկ, Աշխատք, էջ 385:

<sup>9</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 718, թ. 19, տես նույնը Նաթանյան Պ., Աշխատք, էջ 156-157:

<sup>10</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 718, թ. 19, տես նույնը «Известия императорского русского географического общества», Тифлис, 1884/1885, т. 8, № 1-2, стр. 60.

<sup>11</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 193, ց. 1, գ. 111, թ. 1 շրջ.:

<sup>12</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 193, ց. 1, գ. 114, թ. 6:

<sup>13</sup> ՀԱԻ ԱԲԱ, նույն տեղում, էջ 242:

Բռաբերոյ (Բրաբերոյ) գյուղը 1878 թ. դրոյթամբ ունէր 33 տուն և 362 շունչ հայ բնակչութիւն, իսկ թուրքերը ընդամենը 231 հոգի էին:<sup>14</sup> Այս գյուղը ևս թալանի է ենթարկուել և զոհեր տվել 1895 թ. դեպքերի ժամանակ. սակայն պահպանել է իր հայաշատ դեմքը նաև 20-րդ դարի սկզբին և 1914 թ. նրանց թիվը կազմում էր 50 տուն 500 բնակիչներով:<sup>15</sup>

Կովտունը՝ Ալիսի Վերին հովտի կենտրոնական հայաշատ մեծ գյուղերից էր: Վեր էր խոյանում լեռն սարահարթի վրա: Կովտունի արևելքում Գոչ-Յիսար, Յաղթ և Կավրա գյուղերն էին, արևմուտքում՝ Խանձառ գյուղը, հարավում՝ Խորսանա գյուղը:<sup>16</sup>

Այս գյուղը դեռևս 1875 թ. ուներ 156 տուն, 1300 շունչ հայ բնակչութիւն, որոնք ունեին իրենց ս. Աստվածածին եկեղեցին և երկսեռ դպրոցը, ուր այդ ժամանակ հաճախում էին 149 աշակերտ:<sup>17</sup>

Ալիս գետի ծախ ակիւն էին գտնվում Կամիս, Խորասան, Քոթնի, Բյուրակն (Բինգյոլ), Խանձառ, Յաղթ (Տուգասար), Եարիխար, Ղավրագ, Պարտիզակ հայաբնակ գյուղերը:

Կամիս գյուղը գտնվում է Ալիս գետի վերին հովտում, Սեբաստիա քաղաքից շուրջ 30 կմ դեպի արևելք հեռավորութան վրա: Կամիս գյուղի առաջին բնակիչները, ըստ կամիսցի Պ.Վարդան Տերտերյանի հաղորդած տեղեկութան, եղել էին Աղայեկյան, Սինասյան, Մելքոնյան, Պալյան, Քեչիշյան, Լուսարկյան, Թախլճյան, Օհանյան և Ուզունյան ընտանիքները:<sup>18</sup>

Այս գյուղում 1875 թ. ապրում էին 601 հայ բնակիչ, իսկ 1878 թ. նրանց թիվը հասել էր 827, մինչ դեռ նույն ժամանակ թուրքերի թիվը կազմում էր 75 մարդ:<sup>19</sup>

Ակնհայտ է դառնում, որ այս գյուղի բնակչութան մեծամասնութիւնը ևս կազմում էին հայերը:

Խորասան գյուղը բնիկների ստուգաբանութամբ կոչվում է «Յարս

<sup>14</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 193, ց. 1, գ. 114, թ. 6:

<sup>15</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 193, ց. 1, գ. 30, թ. 2

<sup>16</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 193, ց. 1, գ. 303, թ. 1 շրջ.:

<sup>17</sup> Նաթանյան Վ. Պողոս «Տեղեկագրութիւն ընդհանուր վիճակին Սեբաստիոն և անոր կուսակալութան ներքև գտնվող մի քանի գլխավոր քաղաքաց», Կ. Պոլիս, 1877թ., էջ 161:

<sup>18</sup> Առաքել Պատրիկ, Եզվ. աշխ., էջ 352:

<sup>19</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 714, թ. 5:

Աննա»<sup>20</sup> իբր թե Սենեքերիմ արքայի հարսի անունով:

Այս գյուղը, ըստ Պ.Նաթանյանի վկայության, 1875 թ. ուներ 58 տուն, 776 շունչ հայ բնակիչ:<sup>21</sup> Այս տվյալը կարելի է համարել ճշմարիտ, քանի որ 1900 թվականի դրությամբ այստեղ բնակվող հայերի թվաքանակը աճել էր՝ հասնելով 100-120 տան:<sup>22</sup> Նկատելի է, որ ինչպես Հաֆիքի կազայի այլ զուտ հայաբնակ գյուղերում, նույնպես և այստեղ հայ բնակչությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին զգալիորեն աճել էր:

Ջոթնի հայաբնակ գյուղը գտնվում է Գոչ-Հիսարից 10 կմ դեպի հարավ-արևելք: Ըստ ավանդության ջալալիների ասպատակությունների ժամանակ Ագուլիսից շատ ընտանիքներ էին գաղթել այստեղ: Այդպես նաև Բաբերդից գաղթել էին Բաբելյան ընտանիքը, Մխիթարյանները, Գողթն գավառից՝ Բոզոյան ընտանիքը:<sup>23</sup> Այս գյուղում, ըստ 1875 թ. տվյալի՝ բնակվում էին 27 հայ տուն և 347 մարդ:<sup>24</sup>

Սենք հակված ենք կարծելու, որ այս փաստը ճշմարիտ է, քանի որ նույն փաստն է արձանագրվում նաև մեկ այլ պետական փաստաթղթում:<sup>25</sup>

1895 թ. ջարդերի ժամանակ այս գյուղը ևս որոշ կորուստներ տվեց: Միայն 1895 թ. հոկտեմբերի 30-ին, թուրք խուժանը հարձակվելով գյուղի վրա, սպանեց ավագ երեք քահանային և 7 հայ անմեղ մարդու:<sup>26</sup>

Պետք է նշենք, որ այս գյուղի բնակչությունը ևս 20-րդ դարի սկզբին զգալիորեն աճել էր և 1914 թ. վիճակով նրանց թիվը հասավ 100 տան և 1000 հոգու:<sup>27</sup> Իսկ վաստակավոր ուսուցիչ Կ. Գաբիկյանը հայերի թիվը նույն ժամանակ հասցնում է 200 տան և 1600 մարդու:<sup>28</sup> Մեր կարծիքով հնարավոր է, որ այս թիվը մի քիչ չափազանցված լինի:

Բյուրակն (Բինգյուլ) հայաբնակ գյուղը գտնվում է Սեբաստիա քաղաքի հարավարևելյան մասում: Դեռևս 1870 թ. գյուղում կար 40 տուն հայ

<sup>20</sup> Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 363:

<sup>21</sup> Նաթանյան Պ., նշվ.աշխ., էջ 155:

<sup>22</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 425, ց. 1, գ. 50, թ. 11 շրջ.:

<sup>23</sup> Առաքել Պատրիկ, նշվ.աշխ., էջ 382:

<sup>24</sup> Նաթանյան Պ., նշվ.աշխ., էջ 159-160:

<sup>25</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 193, ց. 1, գ. 114, թ. 3:

<sup>26</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 439, ց. 1, գ. 472, թ. 3:

<sup>27</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 193, ց. 1, գ. 303, թ. 2 շրջ., տես նույնը ՀԱԻ ԱԲԱ, թղթապանակ 121/1, էջ 27, տես նույնը Համբարձումյան Վ., նշվ.աշխ., էջ 49:

<sup>28</sup> Գաբիկյան Կ.Ե., «Եղեռնապատում Փոքրում հայոց և Նորին մեծ մայրաքաղաքին Սեբաստիո», Բոստոն, 1924 թ, էջ 597-598:



բնակչություն:<sup>28</sup> Իսկ Պ.Նաթանյանի բերած տվյալների համաձայն, 1875 թ. բնակչության թիվը հասավ 67 տան և 644 անձի :<sup>30</sup> Երևում է, որ Բյուրակնը, իրոք, ևս հանդիսացել է հայկական մի գյուղ, ուր հայերը ապրելով իրենց մշակութային կյանքով 19-րդ դարի վերջին զգալի կերպով աճել են, և արդեն 1914 թ. դրությամբ նրանց թիվը հասնում էր 1500 անձի :<sup>31</sup>

Խանձառ (Խանձար) զուտ հայաբնակ գյուղը գտնվում է Սեբաստիան Կարինին միացնող խճուղու վրա: Այն 1875 թ. տվյալով ուներ շուրջ 33 հայ տուն՝ 388 հոգի բնակչություն, ս. Սարգիս եկեղեցի և մեկ դպրոց:<sup>32</sup> Իսկ 1878 թ. մեկ այլ տվյալի համաձայն, որտեղ գյուղը հիշատակվում է «Խանկառ»<sup>33</sup> ձևով, հայ բնակչությունը կազմում էր 463 մարդ:

Նշենք, որ քաղաքական ու տնտեսական ճնշումների տակ Խանձառի երիտասարդների մի մասը 19-րդ դարի վերջին գաղթել էին ԱՄՆ:<sup>34</sup> Պետք է նկատենք, որ երիտասարդների մի մասն էլ հաստատվել էին Կիլիկիայում՝ Խաչիկ Տերտերյանի գլխավորությամբ, Կովկասում՝ Բարթոլ ու Ստեփան Տերտերյանների գլխավորությամբ, Թորոս ու Չովհաննես Թեիզյանները, Արսեն ու Թագվոր Քեչեչյանների գլխավորությամբ, որոնք շուտով դարձան հայ ազատագրության պայքարի մարտիկներ:<sup>35</sup> Այդ գաղթը, մեր կարծիքով, չի ընդունել զանգվածային բնույթ և 20-րդ դարի սկզբին գյուղը պահպանել էր իր հայեցի դեմքը, քանի որ 1914 թ. հայերի թիվը այստեղ հասնում էր 100 տան և 1000 շնչի:<sup>36</sup>

Հաղթ (Տուգասար, Աղտը-Սարաճի) գյուղը գտնվում է Հաֆիք կազայի հարավային մասում, Գոչ-Հիսարի հետ կապող ճանապարհի վրա, ծորակի մեջ: Գյուղը 2-3 անունով էր կոչվում՝ Հաղթ, Աղտը-Սարաճի, թուրքերեն՝ Տուգ-Հիսար: Ժողովուրդը Տուգլասար կամ Տուգասար էր կոչում:<sup>37</sup>

<sup>28</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 193, ց. 1, գ. 111, թ. 1:

<sup>30</sup> Նաթանյան Պ., նշվ., աշխ., էջ 154:

<sup>31</sup> «Հայ ազգագրություն և քանակաբանություն», հ. 1, էջ 138, տես նույնը Գաբիկյան Կ. Ե., նշվ. աշխ. էջ 600, տես նաև ՀԱԻ ԱԲԱ, նույն տեղում, էջ 242:

<sup>32</sup> Նաթանյան Պ., նշվ., աշխ., էջ 162:

<sup>33</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 193, ց. 1, գ. 114, թ. 3:

<sup>34</sup> Առաքել Պատրիկ, նշվ. աշխ., էջ 365:

<sup>35</sup> Տես նույն տեղում:

<sup>36</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 193, ց. 1, գ. 303, թ. 2:

<sup>37</sup> Առաքել Պատրիկ, նշվ. աշխ., էջ 336:

Դեռ 1870 թ. այստեղ բնակվող հայ բնակչության թիվը հասնում էր 100 տան:<sup>38</sup> Իսկ 1875 թ. տվյալով հայ բնակիչների թվաքանակը հասնում էր 116 տան և 1144 շնչի:<sup>39</sup>

1895 թ. համիդեական ջարդերից առաջ այս գյուղն արդեն ուներ 300 տուն և 2500 անձ հայ բնակչություն:<sup>40</sup> Այս տվյալներից երևում է, որ 19-րդ դարի վերջին երեսուամյակի ընթացքում Հաղթ գյուղի հայ բնակչությունը զգալիորեն աճել էր:

1895-թ. հոկտեմբերի 30-ին 3000-ոց չերքեզներից, թուրքերից, քրդերից բաղկացած զորքը հարձակվում է գյուղի վրա: Մինչև երեկո նրանք քանդում են գյուղի տներից շատերը՝ կանգուն թողնելով միայն 30 տուն:<sup>41</sup> Նրանք սրի քաշեցին 500-ից ավելի հայ երիտասարդների:<sup>42</sup> Ղա էր հետևանքը, որ 1900 թ. գյուղի բնակչության թիվը նվազեց մինչև 1700 մարդու:<sup>43</sup> Այս կոտորածը, ինչպես նաև 1908 թ. Օսմանյան սահմանադրության ընդունումը ստիպեց, որպեսզի Հաղթ գյուղի հայ ազգաբնակչության մի մասը գաղթի ԱՄՆ:<sup>44</sup> Ախ կոտորածը և գաղթը խեղաթյուրեցին Հաղթ գյուղի ժողովրդագրական պատկերը, սակայն նշենք, որ 20-րդ դարի սկզբին գյուղը պահպանել էր իր հայեցի դեմքը, քանի որ, ըստ Հաղթ գյուղի 1914 թ. մարդահամարի եկսեռ հայ բնակիչների թիվը կազմում էր 2600 մարդ:<sup>45</sup>

Յարհիսար գյուղի անունը համարվում է թուրքերեն Եարը-Հիսար՝ կիսապարիսպ իմաստով: Հայերը անվանում էին Շժեղնիք: Գյուղի թուրքերը այստեղ էին հաստատվել 17-րդ դարում: Սակայն հայ բնակչությունը 19-րդ դարում այս գյուղում ևս գերակշռում էր իր թվաքանակով թուրքերին: 1878 թ. արդեն հայերի թիվը այս գյուղում կազմում էր 827 մարդ, մինչ դեռ թուրքերը ընդամենը 300 հոգի էին:<sup>46</sup> Բնակչության այսպիսի բազմամարդությունը այս գյուղում պետք է բացատրել նրանով, որ գյուղը նաև նահիի կենտրոն էր:

<sup>38</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 193, ց. 1, գ. 111, ք. 1:

<sup>39</sup> Նաթանյան Պ., նշվ. աշխ., էջ 155-156:

<sup>40</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 193, ց. 1, գ. 63, ք. 68:

<sup>41</sup> «Դրոշակ», 1896, մախի 1, № 12, «Սեբաստիայի Տուգասար գյուղեն»:

<sup>42</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 439, ց. 1, գ. 63, ք. 68, և ֆ. 439, ց. 1, գ. 472, ք. 6:

<sup>43</sup> Պոտուրյան Վ.Սկրտիչ, «Հայ հանրագիտակ», գիրք Ա., Պուլքեշ, 1938, էջ 110:

<sup>44</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 439, ց. 1, գ. 63, ք. 68:

<sup>45</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 476, ց. 1, գ. 761, ք. 1, տես նաև Տրդատյան Տրդատ, «Հաղթը և հաղթեցիները», Բոսթոն, 1959, էջ 4:

<sup>46</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 193, ց. 1, գ. 114, ք. 3:

Պետք է նշենք, որ այս գյուղում 19-րդ դարի վերջին բացի հայերից և թուրքերից, բնակվում էին նաև անճշան թվով չերքեզներ: Այդ մասին է վկայում 1876 թ. Կ. Պոլսի գավառական տեղեկագիրը, ըստ որի, Յարհիսար գյուղի հայերին պատկանող մշակութային դաշտերի և արտերի մեջ տեղի մյուզիորը (գավառապետը) չերքեզներ է բնակեցնում, և որոշ հայ գյուղացիներ զրկվում են իրենց հողերից:<sup>47</sup> Սակայն կարելի է ենթադրել, որ նրանց թիվը եղել է շատ անճշան:

Ղավրազ զուտ հայաբնակ գյուղը արևմտյան կողմից սահմանակից էր Խորսանա գյուղին: Ավանդության համաձայն Ղավրազ գյուղի բնակչությունը եկել էր Պարսկաստանի Ուրմիա լճափից՝ փախչելով տեղի խաների կեղեքումներից: Դրանցից, օրինակ, Թումանյան ընտանիքը եկել էր Սալմաստից:<sup>48</sup>

Այս գյուղում 1878 թ. դրությամբ բնակվում էին 20 տուն և 261 հոգի հայ բնակչություն:<sup>49</sup> Իսկ նախքան I համաշխարհային պատերազմը այդ թիվը հասել էր 90 տան և 900 բնակչի:<sup>50</sup> Պարզորոշ երևում է, որ այս գյուղում ևս 20-րդ դարի սկզբին հայերի թիվը աճել էր:

Պարտիզակ (Պախչեճիկ) գյուղում դեռ 1878 թ. դրությամբ այստեղ բնակվում էին 279 հայ և 40 թուրք:<sup>51</sup>

1895 թ. սկսվեց թալանը, հալածանքը ու ջարդը, Պարտիզակի և շրջակա գյուղերի վրա: Ղազար Ասատրյանի, Հովակիմ Քյոզինկյանի, Տոնիկ Գասպարյանի, Սիքայել Տերտերյանի, Կարապետ Մթյանի, Մարգար Ասատրյանի, Կարապետ Քյոզինկյանի և ուրիշների խումբը հինգ շաբաթ քաջաբար գյուղը պաշտպանեց թուրքական խուժանից:<sup>52</sup> Սակայն շուտով ժողովուրդը, չդիմանալով թշնամու հուժկու հարվածներին գաղթում է և նրանց մի մասը հասնում է Բռաբերդ: Շուտով նրանցից շատերը այնուամենայնիվ հետ են վերադառնում հարազատ օջախ և արդեն 1906 թ. նրանց թիվը հասնում էր 58 տան և 383 անձի:<sup>53</sup>

1908 թ. թուրքական սահմանադրությունը պատճառ եղավ, որ գյուղի երիտասարդները ենթարկվեին զորակոչի: Քսանմեկ տարեկանները զորակոչ-

<sup>47</sup> Բաֆֆի «Տաճկահայք: Հայկական հարցը» Կիեմնա, 1913, էջ 49:

<sup>48</sup> Առաքել Պատրիկ, մշվ.աշխ., էջ 384:

<sup>49</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 193, ց. 1, գ. 114, ք 3:

<sup>50</sup> ՀԱԻ ԱԲԱ, նույն տեղում, էջ 242:

<sup>51</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 193, ց. 1, գ. 114, ք. 6:

<sup>52</sup> Առաքել Պատրիկ, մշվ.աշխ., էջ 359:

<sup>53</sup> Տես նույն տեղում:



վեցին բանակ, իսկ մեծահասակները գաղթեցին Եվրոպա և ԱՄՆ: Այդ գաղթածներից Նշան Ջանիկյանը, Հակոբ Ասատրյանը, Տոնիկ Մթյանը և Խաչատուր Քյոզինկյանը 1909թ. ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգում հիմնադրեցին «Սեբաստիայի Պարտիզակ գյուղի Ուսումնասիրած միությունը»:<sup>54</sup>

Բացի վերոհիշյալ գյուղերից հայերը կենտրոնացած էին նաև Պարճին, Պորազիտ կամ Պորագուտ, Դոմաճ, Թոտորակ, Օռնովուտ, Չայ-Քուրդ, Ենի-Խան (Նոր-Խան), Ճամճի, Դավչանլու և այլ մի շարք գյուղերում, ուր ևս այս ժամանակահատվածում մեծամասնություն էին կազմել:

Հաֆիքի կազան, ինչպես նշեցինք, իր հայեցի դեմը պահպանել էր նաև 20-րդ դարի սկզբին: Ըստ 1914 թ. մի վիճակագրության:<sup>55</sup>

Հայ բնակչության թիվը կազմում էր 27300 մարդ: Սակայն պետք է նկատենք որոշ անճշտություններ, որոնք տեղ են գտել այս վիճակագրության մեջ: Այդպես, օրինակ Իշխանի և Ազ Ղոյու հայաբնակ գյուղերը գտնվում էին ոչ թե Հաֆիքի, այլ Սեբաստիայի կազայի կազմում: Ինչպես նաև ուռճացված են ցույց տրված Հաղթ գյուղի հայ բնակչության թիվը, քանի որ ըստ 1914 թ. մարդահամարի գյուղի հայ բնակչության թիվը կազմում էր 2600 մարդ և ոչ թե 3500 ինչպես նշված է այստեղ: Այսպիսով մեր հաշվումների համաձայն հայ բնակչության թիվը կազմում էր 24600 մարդ և ոչ թե 27300: Նույն տվյալի համաձայն կազայում բնակվում էին նաև 3570 կղբաշներ, 11825 թուրքեր: Նույն աղբյուրը հավաստում է նաև, որ կազայում բնակվում էին նաև 3000 հույներ: Սակայն աղբյուրների բացակայության պատճառով հնարավոր չեղավ ճշտել նրանց բնակավայրերը: Փաստորեն ողջ կազայում 1914 թ. դրությամբ բնակվում էին 42995 մարդ:

Այսպիսով, Հաֆիքի կազան կազմում էր Սեբաստիայի սանջակի ամենահայաշատ և կարևոր գավառակներից մեկը: Հայերը այս գավառակում ապրում էին ինչպես առանձին գուղերում, այնպես էլ թուրքերի, չերքեզների, հույների և այլ ազգությունների հետ կողք-կողքի և 20-րդ դարի սկզբին կազմում էին ընդհանուր կազայի բնակչության 57,2 %, մինչդեռ թուրքերը կազմում էին բնակչության 27,5 %, կղբաշները՝ 8,3 %, հույները՝ 6,9 %: Հայերը այս կազայի հարուստ պատմամշակութային ժառանգության կրողներն էին:

<sup>54</sup> Տես նույն տեղում:

<sup>55</sup> ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 193, ց. 1, գ. 30, թ. 2, տես նաև ՀԱԻ ԱԲԱ նույն տեղում, Համբարձումյան Վ., նշվ. աշխ., էջ 58-61: